

բաշխն է, կամ այցելուութեան և հրաւերքի տուժանկաց թղթաբերն է, և կամ պատգամաւոր մը. կ'իմացնէ թէ հարկաւոր գործողութեան մը համար եկած է. և կը նշանակէ թէ Պէտք է որ հոն է:

Վրան 3 անգամ զարնուածքը կ'իմացնէ որ զարնողը՝ տանը կամ վարժապետն է կամ վարժապետուհին և կամ այնպիսի մարդիկ որ շատ կը յաճախեն ան տունը. ըսել կ'ուզէ հրամայական կերպով մը թէ Բայ:

Նորս անգամ ուժով զարնուածքը կը նշանակէ որ եկողը հասարակ մարդ մը չէ, այլ ազնուականութեամբ կամ պաշտամամբ նշանաւոր անձ մը՝ որ ձիով տանը դուռը հասած է, և ուժով զարնելովը տանտիրոջ կ'ուզէ իմացնել թէ կ'ուզէ ներս հոն:

Ս երջապէս թէ որ դրան չորս զարնուածքը երկու անգամ կրկնուին, ու երկու անգամն ալ ընդհատեալ միջոցի մէջ, կը նշանակէ որ զարնողը լորտ մըն

է կամ անոր լծակիցը, կամ ուս իշխան մը, կամ գերմանացի պարոն մը, և կամ ուրիշ կարգէ դուրս մարդ մը. և կը նշանակէ, Հապով Բայէ, լասն զի 3է. զի մեծ պառիս կ'ընէ Գնէրնիդ Գալով:

Նսանկ ուժով զարնուածքներով, կրնան երբեմն խաբուիլ այնպիսի ունայնամիտ անձինք որոնք այցելութիւնները կ'ընդունին: Սակայն ըստ ինքեան մտածելով՝ ձանձրացուցիչ են և ընկերական կենաց մէջ անհրաժեշտ քաղաքավարութեան անմասն սովորութիւն մըն է: Սր և իցէ մարդու այցելութեան թալուն վախճանը ուրիշ բան չէ, բայց եթէ՝ դիմացինին հաճոյք մը ընել. և այսպիսի հաճոյից մէջ դիտելիք բաները մասնաւոր խնամքով պահելու է: Նսգ. զիացիք անանկ վրէժխնդիր են դրանց զարնուածքին սովորութեանը, որ եթէ ծառայ մը զարնուածք մը պակաս ընէ տիրոջը վիճակին պահանջածէն, մէկէն ետ կը ճամբուի:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Փ

Արեւելեան վերջին խնդիրն ու պատերազմը¹:

1854 — ՆՈՅԵՄԲԵՐ

23. Օսմանեան պաշտօնէից ժողովոյն փոփոխութիւն կ'ըլլայ. — Մեծ վեզիր Մէհմետ-Գըպրըզլը փաշային տեղ՝ Ռէշիտ փաշան կ'անցնի. Ալի փաշան ալ արտաքին գործոց պաշտօնը ձեռք կ'առնու:

26. Ապրիլի 20ին Աւստրիոյ և Բրուսիոյ մէջ փնտառողական և պաշտպանողական գաշնակցութեան յաւելուած յօդուածը կը ստորագրուի ի վեննա. մէկ կողմանէ կոմս Պոլ-Հաւընշգայն Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնէին, ու մէկալ կողմանէ կոմս Անիմ Բրուսիոյ գեսպանին ձեռքովը: — Չորս պատրաստական պայմանները կը ձանձրուին հիմունք ապագայ խաղաղութեան գաշնագրութեանցը. Եւրոպական ծանր պարագայիցս մէջ կը պահանջուի բոլոր Գերմանիայէն միաբան գործելու ապահովութիւն մը. Բրուսիա կը պարտաւորէ ինքզինք օգնելու Աւստրիոյ, թէ որ այս վերջնոյս Դանուբեան գաւառաց մէջ գտնուած զօրքը յարձակմունք մը կրելու ըլլայ:

¹ Տես հտ. ԺԳ, էրես 15, 92, 159, 191, 223, 255, 286, 334. հտ. ԺԴ, էրես 11, 82, 129, 162, 227, 275, 307, 355:

28. Կորչաքով իշխանին յայտարարութիւնը առ կոմս Պոլ Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնէայ: — Ռուսաց կայսրը վեննայի գահճին չորս առաջարկութիւնները կ'ընդունի, իբր սկիզբ խաղաղութեան գաշնագրութեանը: Դեկտեմբերի 3ին ու Աին վեննայի ու Պեռլինի գահճները այս նիւթոյս վրայ պաշտօնական հաղորդակցութիւններ կ'ընեն Լոնտոնի ու Բարիզու գահճաց:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

2. Գաղղիոյ, Աւստրիոյ և Մեծին Բրիտանիոյ մէջ վեննա հաստատուած գաշնագրութիւնը: Յ. Իրէք բարձրագատիւ կողմերը ինքզինքնին կը պարտաւորեն Ռուսիոյ հետ միաբանութեան մը չինջնալու, մինչև որ իրարու հետ չսորհրդակցին: Բ. Աւստրիա կը խոստանայ Դանուբեան իշխանութեանց սահմանները պաշտպանելու Ռուսիոյ դէմ. և այն երկիրներուն մէջ, գաշնակցաց ամէն պատերազմական շարժումներէն առնանին արգելք մը չըլլալու: Գ. Թէ որ Ռուսի և Աւստրիոյ մէջ թշնամութիւնները սկսին՝ Աւստրիա արեւմտեան տէրութեանց հետ պաշտպանողական և փնտառողական գաշնագրութիւն պիտի ընէ: Դ. Թէ որ նախընթաց յօդուածը կատարուելու ըլլայ՝

գաշնակցող կողմերը խօսք կուտան իրարու, որ առանց իրարու հաւանութիւնն առնելու Ռուսիոյ հետ թշնամութիւնը դադարեցնելու գաշինքի չի ջնան : Ե. Թէ որ մինչև տարւոյս վերջը խաղաղութիւնը չհաստատուի, գաշնակցող կողմերը ուժով միջոցներ 'ի գործ պիտի գնեն իրենց գաշնակցութեանը վախճանին հասնելու : Զ. Պիտի հրաւիրուի Բրուսիան որ իր հաւանութիւնը տայ այս գաշնակցութեանը :

8. Պալմիկ Ժովուն մէջ Ռուսի նաւահանգիստները պաշարման վիճակէն ազատ կ'ըլլան :

9. Գերմանական գաշնակցութիւնը Գերմանական երկու մեծ տէրութեանց մէջ նոյեմբերի 26ին յաւելուած յօդուածը կ'ընդունի . որն է հետեւեալ . Եօդուած 'Ի. Այս գաշնակցութեան համեմատ և Եւրոպայի գործողութեանցը օր օրուան վրայ գէշնալուսն պատճառաւ՝ զինուորական ժողովին կը յանձնուի որ Գերմանական զօրքը պատերազմի ոտքի վրայ ըլլայ :

11. Էմբեր փաշան Պուրքէշտէն կ'ելլէ ու տաճկական զօրաց հետ խրիմ կ'անցնի : 16ին Վառնա կը հասնի :

12. Անգղիոյ Թագուհին Բրիտանական խորհրդարանը կը բանայ . խօսած բացման ճառին մէջ, խրիմի մէջ գաշնակցաց քաջութեանց վրայ գովեստով խօսելէն վերջը, կը յիշէ նաև Գաղղիոյ կայսեր Անգղիոյ ըրած օգնութիւնը, և այս երկու տէրութեանց Աստորիոյ հետ ըրած գաշնագրութիւնը :

19. Պարոն Մանգայֆէլ Բրուսիոյ պաշտօնէից ժողովոյն նախագահը՝ Աստորիոյ, Անգղիոյ և Գաղղիոյ տէրութեանց քով եղած Բրուսական դեսպանացը ձեռքով կ'իմացնէ նոյն տէրութեանց որ Դեկտեմբերի 2ին այս իրեք տէրութեանց մէջ հաստատուած գաշնագրութեանը մէջ չկրնար ինքն ալ մտնալ, որով այն գաշնագրութեանը վախճանը Աստորիոյ և արևմտեան տէրութեանց մէջ առանձնական բան մըն է, բայց ինքն իր կողմանէ պատրաստ է ըստ պիտոյից գաշնագրութիւն մը ընելու :

24. Պուլ կոմսը Էսգէրհայնին կը գրէ . — Ռուսաստան իր արևելեան սահմանները ամրացնելը ըննցուց . . . Ռուսի թէ որ Բրուսիոյ տուած խոստումները կ'ուզէ պահել որ զԱստորիան պաշտպանէ, պէտք է որ երկու կողմի ալ պաշտպանութեան հարկաւոր եղած զօրքը պատրաստէ : Հեռաբար, Աստորիա Ապրիլի 20ին գաշնագրութեան ուժովը կ'առաջարկէ Բրուսիոյ որ Բոզէնի և Պրեզլաւի քով 200,000 զօրք գնէ, և ինքն ալ իր կողմանէ ամէն ջանքն ընէ որ գերմանական գաշնակցութիւնն ալ Ապրիլի 20ին գաշնագրութեանց իր հաւանութիւնը տայ :

Աստորիոյ արտաքին գործոց պաշտօնեան Բրուսիոյ ամսուոյ 19ին տուած պաշտօնագրին պատասխանը կու տայ . Բրուսիա Դեկտեմբերի 2ին գաշնագրութեան մէջ չուզէր մտնալու մինչև որ արևմտեան տէրութիւնը Օգոստոսի 8ին պաշտօնագրին խաղաղութեան չորս պայմաններուն ճիշդ մեկնութիւնը չտան . բայց քանի որ պատերազմը երկընայ և երկու պատերազմող կողմերը չսկսին իրարու հետ գաշինքի գալ՝ խաղաղութեան պայմաններուն որոշ մեկնութիւն մը չարուիր :

26. Գաղղիոյ 1855ին Օրէնսդիր ժողովը կայսրը կը բանայ . խօսուած ճառին իմաստն է Անգղիոյ հետ գաշնակցութեան գործողութիւնները, Աստորիոյ հետ գաշնակցութիւնը՝ որով Աստորիա բաժնուեցաւ Ռուսաստանէն, որն որ 40 տարուէն 'ի վեր Եւրոպայի անկախութեանը գէմ կը սպառնար : Գաղղիոյ զօրքը 120,000 զինուոր աւելի պիտի ունենայ, և այս պատճառաւ ազգային փոխ մը պիտի առնուի : Արուեստից աշխարհաստեղծը 1855ին խաղաղութեան բերքերը բոլոր Բարիկ պիտի ժողվէ :

Ռուսի կայսեր յայտարարութիւնը . — Մեր քրիստոնէական պարտքը ճանշնալով չենք կրնար թողուլ որ արիւնհեղութիւնը ալ աւելի երկայն տեւէ, պատրաստ ենք խաղաղութեան գաշինքի իջնելու, բաւական է որ պայմանները մեր կայսերութեան պատուոյն և մեր հպատակացը շահուն գէմ չեւեն : Այսու ամենայնիւ մեր ուրիշ սրբազան պարտքը կը հրամայէ մեզի որ մեզի գէմ եկած ամենայն յարձակմանցը մեր ամէն ջանքովը ու զոհովը գէմ գնենք :

27. Տրուէն տը Լիւի Բրուսիոյ ամսուոյ 19ին գրած պաշտօնագրին պատասխան կու տայ . Գաղղիա աւելորդ կը սեպէ նոր գաշնագրութիւնը . նեղ . իսկ թէ որ կ'ուզուի գաշնակցութիւն մը ընել՝ Դեկտեմբերի 2ին գաշնակցութեան հաւանելով ամենայն բան կը ընդնայ : Կը յայտնէ որ Դեկտեմբերի 2ին գաշնակցութեան վերջը՝ անկուրելի է որ Գաղղիա նոր գաշնակցութիւն մը ընէ գարձեալ առանց իւր գաշնակցացը խորհուրդը հարցնելու :

28. Ռուսիոյ Վեննա կեցող դեսպան Կորչաքով իշխանին յայտարարութեանը Դեկտեմբերի 2ին ստորագրող նուիրակները Վեննա ժողով կը նեն, և առանց խաղաղութեան չորս պայմաններուն իմաստը և ընդարձակութիւնը ճշգրտու, հետեւալ յայտարարութիւնը կը հանեն : Ե. Մոլտաւիայի, Վալաքիայի և Սերվիոյ երկիրներուն վերայց Դրան և Ռուսիոյ մէջ եղած գաշնագրութիւնները խաղաղութեան գաշնաց մէջ ամենեւեմ զօրութիւն պիտի չունենան, որովհետեւ այն երկիրները ասկէ վերջը բոլոր միաբան տէրութեանց պաշտպանութեան տակը պիտի մտնեն : Բ. Ստորին Դանուբը Ագրիանուպոլսոյ գաշնագրութեան Բ յօդուածին մէջ իր կիրարկու բաժանման կարգադրութեանէն դուրս պիտի հանուի, և Դանուբի նաւարկութիւնը առանձին հոգաբարձուաց կառավարութեան տակ պիտի մտնէ : Գ. Օսմանեան տէրութեան էութիւնը եւրոպական հաւասարաւ կշռութեան հետ բոլորովին պիտի միանայ, և Սև ծովուն մէջ Ռուսիոյ զօրութեանը չափ պիտի գրուի : Դ. Ռուսաստան մինչև հիմա Դրան հետ ըրած գաշինքներէն և մասնաւորապէս Քիւչիկ-Քայնարձըգի գաշնագրութեանէն պիտի հրաժարի : Հինգ տէրութիւնը մէջերնին միաբան, առանց Օսմանեան տէրութեան պատուոյն և անկախութեանը գպչելու, ետեւ պիտի ըլլան որ Դրան հպատակ քրիստոնէայ ազգաց, առանց հաւատքի զանազանութեան, ամէն արտօնութիւնները պահուին :